



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8493



4985

6

4985

ՋԷՄՍ

ՅՈՅԶ

8493

4985

Թարգմ. ուղևորներից

ՍԻՐԱԿԱՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Վ.Ս.ՂԱՐՇԱՊՅԱՆ


Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1904

8493

ՅՈՅԶ

Ջ Ե Մ Ս



Дозволено цензурою 17 Февраля 1904 г. г. Тифлисъ.

1. Յոյզերի եւ բնագրների համեմատութիւնը:—Յոյզերի և բնագրների յատուկ տարբերութիւնն այն է, որ յոյզը դպացուելու ձգտումն է, իսկ բնագրը—գործելու ձգտում՝ շրջապատի մէջ որոշ առարկայի (օբեկտի) ներկայ լինելու պատճառով: Բայց յոյզերն էլ իրենց համապատասխան մարմնական արտայայտութիւնն ունին, որ երբեմն մկանների խիստ կծկումն է լինում (օր. անի կամ զայրոյթի բոստին). և շատ դէպքերում կարող է քիչ գծուար լինել մի կարուկ սահմանագիծ դնել յուզական գործողութեան (պրոցեսի) և բնագրական հակազգման (ռէակցիայի) նկարագրութիւնների միջև, երբ այս երկուսն էլ մի և նոյն առարկայից են յառաջացած լինում: Հոգեբանութեան զբոյժի ո՞ր գլխում պէտք է շարադրել երկիւղի երևոյթը. արդեօք բնագրներն թէ յոյզերի գլխում: Ո՞ր գլխում պէտք է նկարագրել հետաքրքրութիւնը, նախանձը, հայրն: Գիտական տեսակէտից այդ մի և նոյն է. ուստի և այդ հարցը լուծելիս պէտք է գործնական յարմարութիւնն աչքի առաջ ունենանք: Իբրև զուտ ներքին հոգեկան վիճակներ՝ յոյզերը բոլորովին աննկարագրելի են: Բացի դրանից այգսիտի մի նկարագրութիւն աւելորդ բան կը լինէր, քանի որ յոյզերը որպէս հոգեկան վիճակներ առանց դրան էլ ընթերցողին լաւ յայտնի են: Նկարագրել կարող ենք միայն՝ թէ ինչ առընչութիւն ունին յոյզերը իրենց առաջացնող օբեկտների և ընթացակից հակազգումների (ռէակցիաների) հետ: Իւրաքանչիւր օբեկտ, որ ազդում է բնագրներից որ և է մէկի վերայ, ընդունակ է մեր մէջ նաև յոյզ առա-

*) Уильямъ Джемсъ. Психологія. Переводъ съ англійскаго Липшина. Глава XXIV. Эмоція.

Չացնելու: Այստեղ ամբողջ տարբերութիւնն այն է, որ ինչ որ յուզական հակադրում (ռէակցիայ) ենք կոչում՝ կրող սուբեկտի (անձի) մարմնի սահմանից դուրս չէ գալիս, իսկ բնազդական ռէակցիայ կոչուածը կարող է նաև աւելի հեռու գնալ և իրեն առաջացնող օրեկտի հետ գործնականում փոխադարձ յարակցութիւններ ունենալ: Թէ բնազդական և թէ յուզական գործողութիւնների ժամանակ առաջիկայ օրեկտի լոկ յիշողութիւնը կամ մտապատկերը կարող է բաւական լինել ռէակցիայ յառաջ բերելու համար: Կարող է պատահել նոյն իսկ, որ մարդս աւելի մեծ կատաղութիւն զգայ իրեն հասցրած վիրաւորանքի մասին մտածելիս քան նոյն վիրաւորանքն անմիջապէս ստանալիս, և մօր մահուանից յետոյ մարդ կարող է դէպի նա աւելի սաստիկ գորով զգալ քան կենդանութեան ժամանակ: Սոյն ամբողջ գլխում յոյզի օրեկտ գարձուածքը եւ գործ եմ ածելու առանց խըտրութեան թէ այն դէպքի համար, երբ ներկայ գտնուող մի իրական առարկայ է այդպիսի օրեկտ լինում, և թէ այն դէպքում, երբ այդ օրեկտը պարզապէս մի վերարտադրուած մտապատկեր է լինում:

2. Յոյզերի բազմազանութիւնն անվերջ է: Բարկութիւնը, երկիւղը, սէրը, ատելութիւնը, ուրախութիւնը, վիշտը, ամօթը, հպարտութիւնը և այս յոյզերի զանազան նրբերանգութիւնները կարելի է յոյզի ամենից բիրտ ձևերը կոչել, քանի որ սերտ կապուած են մարմնի համեմատաբար զօրեղ գրգռումների հետ: Աւելի նուրբ յոյզեր են բարոյական, մտաւորական և գեղասիրական գզացմունքները, որոնց հետ սովորաբար մարմնական պտկաս յօրեղ գրգռումները են կապուած լինում: Յոյզերի օրեկտները, յոյզերին կապակից հանգամանքները և յոյզերի զանազան տեսակները նկարագրել կարելի է անվերջ: Նւրաբանչիւր յոյզի անթիւ նրբերանգութիւնները աննկատելի կերպով մէկը միւսին են փոխուում և մասամբ նշանակուում են լեզուի մէջ համանիշներով. ինչպէս օրատելութիւն, հակակրութիւն, թշնամութիւն, չարակամութիւն, տհաճութիւն, գարշանք, բէն, զգուանք և այլն: Դրանց տարբերութիւնը որոշուած է համանիշների բառարաններում և հոգեբանութեան գասընթացներում: Հոգեբանութեան գերմանական գասագրքերից շատերի՝ յոյզերի մասին խօսող գլուխները ուղղակի համանիշների բառարաններ են: Սակայն մի՛ արդէն ինքն ըստ ինքեան ակներև բանի արգիւնաւոր մշակումը իւր սահմանն ունի. և նման ուղղութիւն ունեցող բազմաթիւ աշխատասիրութիւնների հետևանքն այն եղաւ, որ այս ինչերին վերաբերեալ

նակ կմնայ միայն՝ որ ակնածութեամբ յոյզերի զանազան առանձնայատկութիւնների, աստիճանների և առաջացնելիք գործողութիւնների ցուցակներ կողմնէ: Բայց եթէ յոյզերը աւելի ընդհանուր պատճառների արգիւնք համարելիս լինինք (ինչպէս որ օր. կենսաբանութիւնը և տեսալինքի զանազանութիւնը շրջապատի պայմաններից յառաջացած փոփոխութիւնների և միանգամ ձեռք բերած փոփոխութիւնների ժառանգաբար աւանդման արգիւնք է համարում), այն ժամանակ տարբերութիւններն որոշելը և դասաւորելը լոկ հասարակ օժանդակող միջոցների նշանակութիւն կստանան: Յետագայ սակաւաթիւ երեսներում՝ առ այժմ յուզմունքների բիրտ կոչուած ձևերով շատանալով յոյզերի մի պատճառի վերայ մտնանիչ կանեմ, որ խիստ ընդհանուր բնաւորութիւն ունեցող մի պատճառ է:

4. Յոյզի բիւր ձևերում զգացմունքը նոյն յոյզի մարմնական արտայայտման արգիւնքն է:—Սովորաբար այնպէս են մտածում, թէ յոյզի բիրտ ձևերում մի օրեկտից, առարկայից, ըմբռնուած հոգեկան աղուտորութիւնը յոյզ կոչուած հոգեկան վիճակ է առաջացնում մեր մէջ, իսկ այս հոգեկան վիճակը իրենից յետոյ որոշ մարմնական արտայայտութիւն է յառաջ բերում: Իմ տեսութեան համաձայն ընդհակառակը՝ մարմնական գրգռմունքը անմիջապէս է հետեւում իրեն առաջացնող փաստի ըմբռնմանը, և նոյն այդ գրգռմունքի գիտակցումն է, քանի գրգռմունքը գեղատեղի է ունենում, հէնց ինքը յոյզը: Սովորաբար այսպէս են ասում. մեր կարողութիւնը կորցրինք, վշտացանք և լաց ենք լինում. արջի հանդիպելինք, վախեցանք և փախչում ենք. թշնամին մեզ վիրաւորեց՝ կատաղեցինք և հարուածեցինք նրան: Իմ պաշտպանած հիպոթէզի համաձայն՝ այդ անցքերի հերթը մի քիչ այլ կերպ պիտի լինի. այն է՝ առաջին հոգեկան վիճակը իսկոյն և եթ չէ յաջորդում երկրորդ հոգեկան վիճակով. սրանց միջև մարմնական արտայայտութիւններ պէտք է տեղի ունենան. ուստի ամենից բանաւոր կը լինէր այսպէս ասել. վշտացել ենք որովհետև լալիս ենք. կատաղել ենք որովհետև հարուածում ենք ուրիշին. ա՛հ ենք զգում որովհետև դողում ենք. և ոչ թէ ասել, թէ լալիս ենք, հարուածում ենք, դողում ենք. որովհետև և վշտացած ենք, կատաղած ենք, վախեցած ենք: Եթէ ըմբռնմանը անմիջապէս մարմնական արտայայտութիւնները չյաջորդէին՝ այդ ըմբռնութիւնը իւր ձևի կողմից մի զուտ իմացական գործողութիւն (ակտ) կը լինէր, զժգոյն, զուրկ գունաւորութիւնից և յուզական «ջերմութիւնից»: Այդպիսի դէպքում կարող էինք արջ տեսնել և վճռել որ ամենից լաւ կը լինի փախչել. կարող էինք վիրա-

զուտ նկարագրական մատենագրութիւնը, Գեղարտից սկսած մինչև մեր օրերը, հոգեբանութեան ամենաձանձարալի մասն է: Գեռ աւելի՛ այս մասն ուսումնասիրելիս զուտ էք, որ յոյզերի՝ հոգեբաններէից առաջարկուած դասաւորութիւնները մեծ մասամբ սոսկ Ֆիլիցիաներ (մտացածին բաներ) են, կամ դուրի էական նշանակութիւնից, և որ հոգեբանների յաւակնութիւնը՝ իբր թէ իրանց տերմինոլոգիան ճշգրիտ է, կատարկապէս անհիմն է: Բայց և այնպէս, յոյզերի հոգեբանական ուսումնասիրութիւններին մեծ մասը դժբախտաբար զուտ նկարագրական բնաւորութիւն ունի: Աէպերում յոյզերի նկարագրութիւնը հետաքրքրութեամբ ենք կարդում. քանի որ ինքներս էլ նրա համար ենք ստեղծուած, որ յոյզեր ունենանք մեր մէջ: Աէպերում ծանօթանում ենք յոյզեր առաջացնող օբեկտներին և հանդամանքներին, և այս պատճառով վէտի այս կամ այն էջը զարգարող՝ ինքնադիտողութեան իւրաքանչիւր նուրը գիծ իսկոյն և եթ մեր մէջ զգացմունքի արձագանք է գտնուած: Աֆորիզմների շարքի ձևով գրուած մատենագրական—փիլիսոփայական դասական (կլասիկ) երկերը նոյնպէս մեր յուզական կեանքի վերայ լոյս են սփռում, և մեր զգացմունքները շարժելով մեզ հաճոյք են պատճառում: Իսկ ինչ զգացմունքների «Ռիտական հոգեբանութեանն» է վերաբերում՝ այդ խնդրի մասին չափազանց բազմաթիւ կլասիկ աշխատութիւններ կարգաւուց՝ երևի ճաշակա բոլորովին փշաքերել եմ. միայն թէ՛ աւելի կղերադասէի կարգով մերձակայ լուսների բառական նկարագրութիւնը քան նորից այդ հոգեբանական ստեղծագործութիւնները կրկին անգամ կարգաւ: Սրանց մէջ ոչ մի արդիւնաւոր գեղարվարող սկզբունք, ոչ մի հիմնական հայեցակէտ չկայ: Յոյզերն անվերջ տարբերում և երանգաւորում են. բայց այդ ուսումնասիրութիւններում ոչ մի արամարանական ընդհանրացում չէք գտնի: Մինչդեռ իսկական գիտական աշխատանքի ամբողջ հրապոյրը արամարանական վերլուծման շարունակական խորացումն է: Միթէ յոյզերի վերլուծման ժամանակ անհնարին է բարձրանալ կոնկրետ նկարագրութիւնների մակերևոյթից: Կարծում եմ որ այգպիսի կոնկրետ նկարագրութիւնների չըջանից գուրս գալու ելք կայ. հարկաւոր է միայն ջանք գործ գնել այդ ելքը գտնելու համար:

3. Յոյզերի բազմազանութեան պատճառը.—Հոգեբանութեան մէջ յոյզերը վերլուծելու առիթով ծագող գծաւորութիւնները, կարծում եմ, նրանից են, որ խիստ սովորել են յոյզերը միմեանցից բացարձակապէս դատուած երևոյթներ նկատել: Քանի որ իւրաքանչիւր յոյզ մի մշանջինական, անձեռնմխելի հոգեկան էութիւն կը համարենք, նման տեսակների, որ կենսաբանութիւնը մի ժամանակ անփոփոխելի էութիւններ էր համարում, մինչև այն ժամա-

ւորանք ստանալ և արգարացի գտնել հարուածին պատասխան տալ. բայց այդ դէպքերում ոչ ահ, ոչ էլ զայրոյթ կգգայինք:

Այսպիսի անտաշ ձևով արտայայտուած լինելով՝ հիպոտէզս կարող է տարակոյսների տեղիք տալ: Այն ինչ հիպոտէզիս ըստ երեւոյթին օտարոտի (պարագործաւ) բնաւորութիւնը չքացնելու և թերեւ նրա ճշմարիտ լինելուն համոզուելու համար՝ բազմաթիւ և հեռաւոր, երկար ու բարակ խորհրդածութիւնների կարիք չը կայ:

Ամենից առաջ ուշադրութիւն դարձնենք այս փաստի վերայ. իւրեք անչիւրը ըմբռնութիւն Ֆիլիքալիտն որ ոչ ներգործութեամբ մեր կազմուածքի (օրգանիզմի) վերայ ընդարձակ չափով ծաւալուող մի ազդեցութիւն է անուամ, որը նախորդում է մեր մէջ յոյզի կամ յուզական պատկերի ծագմանը: Մի ոտանաւոր, գրամայ, դիւցազներգութիւն լսելիս՝ յաճախ զարմանալով նկատում ենք, որ մեր մարմնով յանկարծ ալիքի նման մի դող է անցնում, կամ որ մեր սիրտը աւելի ստատիկ կերպով բարախել է սկսում, իսկ աչքերից սրտը կերպով երաժշտութիւն լսելիս կարելի է դիտել: Նրբ անտառում կերպով երաժշտութիւն լսելիս կարելի է դիտել: Նրբ անտառում զրօսնելիս յանկարծակի ինչ որ մութ, շարժուող բան ենք նկատում՝ մեր սիրտը դադարում է բարախելուց, և իսկայն և եթ չնչերս բռնուած է փտանդի մասին ոչ մի որոշակի գողափար մտքներումս գեռ չկազմած: Նթէ մեր բարեկամը անգունդի եղերքին է մօտենում՝ մեզ լաւ յայտնի անհանդատութիւնն ենք զգալ սկսում և յեռ կանգնում, չը նայելով որ լաւ գիտենք որ մեր բարեկամը փտանդից դուրս է, և նրա վայր ընկնելու մասին ոչ մի մեկին մտապատկեր չունինք: Հեղինակս վառ կերպով յիշում է իւր զարմանքը երբ ինքը մէկ անգամ 7—8 տարեկան հասակում ուշաթափ էր կղել դոյլի մէջ ձիու արիւն տեսնելուց. այդ դոյլի մէջ փայտկար, որով նա հեղուկը սկսեց խառնել. արիւնը փայտի ծայրից կաթում էր դոյլի մէջ. բացի մանկական հետաքրքրութիւնից երկտան ուրիշ ոչինչ չէր գտնւած: Յանկարծ աչքերը մթնեցին, ականջները խշշացին և երեխան դիտակցութիւնը կորցրեց: Առաջ նա երբէք լաւ չէր կղել որ արիւնին նայելուց մարդկանց սիրտը խառնում է և ուշքը գնում. և արիւնից այնքան քիչ էր զգում, այնքան քիչ փտանք էր տեսնում նրա մէջ՝ որ այգպիսի բնքոյշ հասակում անգամ չէր կարող չը զարմանալ, թէ ինչպէս կարմիր հեղուկով լիքը դոյլի լակ ներկայութիւնը մեր օրգանիզմի մէջ կարող է այգքան ցնցող ներգործութիւն ստաջացնել:

Որ յոյզի անմիջական պատճառը արտաքին գրգռումների՝ մեր նեարդերի վերայ գործած Ֆիլիքալիտն ազդեցութիւնն է՝ սրա

համար ամենալաւ սպասոյց այն ախտաբանական (սպասու-
 գիկ) դէպքերը կարող են լինել, երբ յոյզի համար մի
 համապատասխան օրէկա չը կայ: Յոյզերի մասին իմ ա-
 ռաջարկած հայեցակէտի դիտարար առաւելութիւնները մէկն հէնց
 այն է, որ նրա միջոցով կարող ենք մէկ ընդհանուր սքեմայի, կարգի
 տակ գասել յոյզերի թէ հիւանդական և թէ առողջ նորմալ (կանոնա-
 ւոր) դէպքերը: Յիմարանոցներում՝ ոչ մի բանով չը պատճառաբա-
 նուած բարկութեան, երկիւղի, մելամաղձի կամ երազողութեան,
 ինչպէս և ոչնչով չը պատճառաբանուած ապաթիայի օրինակների
 ենք հանդիպում, որ յամառութեամբ շարունակուում է, չնայելով որ
 ոչ մի արտաքին գրգող պատճառ չկայ: Առաջին դէպքում պէտք է
 ենթադրենք որ նեարդերի մեքանիզմը որոշ յոյզերի վերաբերմամբ
 այն աստիճան տպաւորուն է դարձել, որ ամեն՝ նոյն իսկ անհամա-
 պատասխան՝ գրգիչ (ստիմուլ) բաւարար պատճառ է հանդիսանում
 նրա մէջ այդ ուղղութեամբ գրգիռ առաջացնելու, և այդպիսով այն
 զգացմունքների ուրոյն ամբողջութիւնը (կոմպլէկսը) յառաջ բերե-
 լու, որոնք և յառաջիկայ յոյզն են կազմում: Սյապէս, օրինակ, երբ
 մի մարդ խորը շունչ քաշելու անկարողութիւն, սրտի բարախում,
 պնեւմոգաստրիկ նեարդի գործունէութեան առանձին տեսակի փո-
 փոխութիւն որ սովորաբար «սրտի անձուկ» է կոչուում, անշարժ
 տարածուած գիրք ընդունելու ձգտում և բացի այս բոլորից մեր
 ներսը կատարող նաև մի քանի դեռևս չհետազոտուած այլ գոր-
 ծողութիւններ է գգում միաժամանակ՝ այս բոլոր երևոյթների հա-
 ւաքումը (կոմբինացիոն) մարդու մէջ ահի զգացում է առաջացնում,
 և մարդս շատերին լաւ յայտնի մահացու վախի գոհ է դառնում:
 Ծանօթներէցս մէկը՝ որ այս ամենատարաբախի ճիւղանդութիւնը
 մի քանի անգամ ունեցած է եղել՝ ինձ պատմել է, որ իւր հե-
 գեկան տանջանքների կետրոնը սրտի շրջանը և շնչառութեան
 գործարանն էին լինում. հիւանդութեան առաջն առնելու համար
 նա դիտարարպէս աշխատել է շնչառութեանը հակել և դանդաղե-
 ցնել սրտի բարախումը. ահը անհետանում էր հէնց որ նրան յա-
 ջողուում էր խորը շունչ քաշել և ուղղել իւր կազմուածքը:

Այստեղ յոյզը լոկ մարմնական վիճակի մի զգայութիւն է, և
 նրա պատճառը մի գուտ ընտանական պրոցես է:

Յետոյ՝ ուշադրութիւն դարձնենք՝ որ իւրաքանչիւր
 մարմնական փոփոխութիւն, ինչ տեսակի էլ լինի,
 երևան գալու ըսպէսին մեզնից զգացում է մեկին
 կամ շփոթ կերպով: Եթէ ընթերցողը մինչև այժմ այս հանգա-
 մանքին ուշադրութիւն դարձած չէ եղել՝ հետաքրքրութեամբ
 և զարմանքով կարող է նկատել, թէ ինչպէս մարմնի գանազան

մասերում տեղի ունեցող բազմաթիւ զգայութիւններ՝ հոգու այս
 կամ այն յուզական վիճակին ընթացակից բնորոշ նշաններ են հան-
 դիսանում: Ի հարկէ հիմք չունինք սպասելու, որ ընթերցողը այս-
 պիսի մի կուրիոզ (մազալու) հոգեբանական վերլուծման համար ինքնա-
 դիտողութեամբ իւր մէջ կը գտայ գրաւիչ կրքերի բունկումները. բայց
 նա կարող է այն յոյզերը գիտել որոնք հոգու աւելի անդորր վիճակների
 ժամանակ են տեղի ունենում, և թոյլ աստիճանի յոյզերի նկատմամբ
 կազմած արգարացի եզրակացութիւնները կարելի կը լինի նոյն յոյ-
 զերի նաև աւելի սաստիկ աստիճանների վերայ տարածել: Յոյզի ժա-
 մանակ մեր մարմնի ամբողջ ծաւալում շատ վառ կերպով գանազան
 զգայութիւններ ենք ունենում. մարմնի իւրաքանչիւր մասից գիտակ-
 ցութեան մէջ գանազան զգայական սպաւորութիւններ են մուտք
 գործում՝ թոյլ, զօրեղ, անխորժ, անորոշ տպաւորութիւններ՝
 որոնցից՝ ամեն մարդուց միշտ գիտակցուող անձնաւորութեան զգաց-
 մունքն է կազմում: Զարմանալի է, թէ սրալիսի աննշան շարժա-
 ւիթներ յաճախ մեր գիտակցութեան մէջ զգայութիւնների այդպիսի
 հաւաքումներ են առաջացնում: Նոյն իսկ ամենաթույլ կերպով
 ղշտացած լինելիս միշտ կարող ենք նկատել, որ մեր հոգեկան
 վիճակի ընթացական արտայայտութիւնը աչքերի կկոցուելը և յոն-
 քի մկանների կծկուելն է լինում: Մի անսպասելի գժուարութեան
 հանդիպելիս՝ կոկորդում ինչ որ անյարմարութիւն ենք գգում, որ
 մեզ ստիպում է թուք կուլ տալ, կոկորդը մաքրել և թեթևակի
 հաղար՝ Նմանօրինակ երևոյթներ կարելի է գիտել նաև ուրիշ բազ-
 մաթիւ դէպքերում: Յոյզերին ընթացակցող այս օրգանիկ փոփո-
 խութիւնների հաւաքումների բազմազանութեան շնորհիւ՝ վերա-
 ցական խորհրդածութիւնների վերայ յենուելով կարող ենք ասել,
 որ յոյզի իւրաքանչիւր նրբերանգութիւն ամբողջութեամբ վերցուած
 իւր ուրոյն բնութսական արտայայտութիւնն է ունենում, որը նոյն-
 պիսի մի կզակի դէպք է (unicum), որպէս յոյզի նոյն նրբերանգու-
 թիւնը: Յոյզի ժամանակ մարմնի ձևափոխուող առանձին մասերի
 բազմաթիւ լինելուց է, որ մարդուս համար այնքան գժուար բան է
 հանդիսա վիճակում գանուելիս որ և է յոյզի արտաքին արտայայ-
 տութիւնները վերարտագրել: Կամածին շարժումների մկանների՝
 մի յոյզի համապատասխանող խաղը վերարտագրել կարող ենք.
 բայց կաշի, գեղձերի, սրտի և ընդերքի հարկաւոր զըրգիւ-
 ները մեր կամքով յառաջ բերել չենք կարող: Ինչպէս որ
 արհեստական փուշտոցին ինչ որ բան պակաս է լինում իս-
 կական փուշտոցի հետ համեմատած՝ այնպէս էլ արհեստական կեր-
 պով վերարտագրուած վիշտը կամ օգետութիւնը իսկականին լիակա-
 տար կերպով նման լինել չէ կարող, երբ նոյն արտադրութիւնների
 յառաջ գալու հարկաւոր շարժաւիթները չկան:

Սյժմ գանք տեսութեանո ամենազիւաւոր կէտի շարագրութեանը, որ է՝ թէ մի զօրեղ յոյզ պատկերացնենք և փորձենք մեր գիտակցութեան այդ վիճակից մըտքում մէկ-մէկ գուրս հանել նոյն յոյզի հետ կապակցուած մարմնական սիմպոսմների բոլոր զգայութիւնները՝ ապա վերջի վերջոյ եղած յոյզից այլ ևս ոչինչ չի մնայ, ոչ մի «հոգեկան նիւթ» չի մնայ որից կարելի լինի նոյն յոյզը կազմել, այդ հանուսից մնացած մնացորդը դուստուար (ինտելեկտուալ) ըմբռնութեան մի սառն, անտարբեր վիճակ կը լինի: Մարդկանց մեծ մասը որոնցից ինզրել էի իմ այս դրութիւնը ստագիլ ինքնազիտողութեամբ, կատարելագէս համաձայն էին ինձ, բայց ոմանք յամառութեամբ շարունակում էին պընդել, որ իրանց ինքնազիտողութիւնը իմ ենթադրութիւնը (հիպոթեզը) չէ տրդարացնում: Շատերը չեն կարողանում հարցս հէնց կարգին հասկանալ: Օրինակ, խնդրում ես որ ծիծաղաշարժ առարկայ տեսնելիս ծիծաղի ամեն մի զգացմանը և ծիծաղելու ամեն մի հակում իրանց գիտակցութիւնից հեռացնեն և ապա ասեն՝ թէ այդ ժամանակ առաջիկայ առարկայի ծիծաղելի կողմը ինչը կը լինի, արդեօք այդ զէպքում գիտակցութեան մէջ չի մնայ լսի ըմբռնութիւն մի առարկայի որ (ծիծաղելի) առարկաների գասին է պատկանում, հարցիս յամառութեամբ պատասխան են տալիս, թէ այդ ֆիզիքապէս անհնարին է կատարել, և որ ծիծաղելի առարկայ տեսնելիս միշտ ստիպուած են լինում ծիծաղել: Մինչդեռ առաջարկածս խնդիրն այն չէր՝ որ ծիծաղելի առարկայի վերայ նայելիս ծիծաղելու ամեն մի հակում իրապէս ոչնչանէին իրենց մէջ: Առաջարկածս լսի սպեկուլատիւ, տեսական բնաւորութիւն ունեցող մի խնդիր է և առաջարկում է՝ որ ամբողջութեամբ առած յուզական վիճակից մտքով մի քանի զգայական տարրեր հեռացնենք, և որոշենք թէ այդ զէպքում մնացորդ տարրերը որոնք կլինին: Ես չեմ կարող հրաժարուել այն մտքից, որ դրած հարցս լաւ հասկացող ամեն մարդ կհամաձայնի վերեւում արտաբայտածս դրութեանը: Ես բնաւ չեմ կարող պատկերացնել՝ թէ մեր գիտակցութեան մէջ երկուդի էլ ինչ յոյզ կը մնայ, և թէ հեռացնենք այն բոլոր զգայութիւնները որ կապուած են հետեւեալ բնախօսական երևոյթներէ հետ՝ սրտի սաստկացած բաբախում, կարճ շնչառութիւն, շնթուրքներէ դող, կաշուի փշաքաղում, անգամների թուլութիւն և ստամոքսի գրգռոց: Արդեօք կարո՞ղ է մէկը զայրոյթի վիճակ պատկերացնել և նոյն ժամանակ իսկոյն և եթ երեակայել սչ թէ կըծքի ալեկոծում, երեսի մէջ արեան լեցուելը, ուղեների լայնանալը, ատամների իրար սեղմուելը և ուժգին գործողութեան ձգտում, այլ ընդհակառակն՝ մկաններն առանց լարուած վիճակի,

հանգարտ և կանոնաւոր շնչառութիւն և հանդիստ երես երեակայել: Հեղինակը գտնէ բնաւ չէ կարող այդ անել: Նրա կարծիքով՝ այդ զէպքում զայրոյթը որպէս արտաքին որոշ արտաբայտութիւնների հետ կապուած մի զգացմանը պէտք է իսպառ բացակայէ, և կարելի է ենթադրել՝ որ մնացորդը անդորր, անկիրք, ամբողջովին մտաւոր (ինտելեկտուալ) աշխարհին պատկանող գատողութիւն կը լինի, ուրիշ խօսքով՝ այդ զէպքում մնացորդը մի միտք կը լինի այն բանի մասին՝ թէ այս ինչ մարդիկ պատժի են արժանի իրենց մեղքերի համար: Նոյն խորհրդածութիւնը նաև վշտի յոյզին է վերաբերում: Խոնջ կը լինէր վշտը առանց արտաուքի, հեկեկանքի, սրտի բաբախման կանգ առնելու և սիրտը ճմլուելու: Զգացական երանգից զուրկ մի խոստովանութիւն այն փաստի, թէ այս ինչ հանգամանքները խիստ վշտալի են—և ուրիշ ոչինչ: Նոյն բանը նաև ուրիշ ամեն կըքի վերլուծման ժամանակ երեան է գալիս: Արեւ մարմնական ստատուից զուրկ մարդկային յոյզը մի սին հնչուս է: Ես չեմ պընդում որ այդ տեսակ յոյզը իրերի բնութեանը հակասող մի բան է, կամ որ զուտ ոգիները անկիրք մտածողական գոյութեան են գատապարտուած, ևս ուզում եմ միայն ասել որ մեզ համար որեւէ մարմնական զգայութիւնից զրկուած յոյզը մի աներեակայելի բան է: Քանի շատ եմ վերլուծում իմ հոգեկան վիճակները այնքան աւելի եմ համոզում՝ որ իմ ունեցած «բիրտ» կըքերը և յափշտակութիւնները իսկապէս այն մարմնական փոփոխութիւններից են ծագում և առաջանում, որ սոյնորարք իրանց արտաբայտութիւնը կամ հետեւանքն ենք համարում, և աւելի ևս սկսում է ինձ հաւանական թուալ, որ եթէ մարմինս անզգայ (անեսթեզիկ) գտնայ՝ թէ դուրեկան և թէ անզուր յոյզերի (աֆեկտների) կեանքը ինձ համար մի բուրբոյլին խորթ բան կը լինի, և մի դուտ խնայական կամ մտաւորական (ինտելեկտուալ) գոյութիւն քարշ տալ ստիպուած կլինիմ: Թէև այդպիսի գոյութիւնը հին իմաստուններին մի իզէալ էր թուում, բայց մեզ համար, որ միայն մի քանի սերնդով ենք բաժանուած փիլիսոփայութեան այն շրջանից երբ զգայականութեան ստաջնակարգ տեղ տրուեց, այդպիսի կեանքը չափազանց ապաթիկ, անկենդան կը երևայ, որին չարժէ ձգտել այնպիսի յամառութեամբ:

5. Իմ հայեցակէսը մասերիալիստիկ անուանել չե կարելի— Իմ տեսութեան մէջ նոյնքան մատերիալիստ կայ որքան և ամեն մի հայեացքում որ մեր յոյզերը նեարդական գործողութիւններից պայմանաւորուած է համարում: Ընթերցողներինցս ոչ մէկը չի բողոքի այս դրութեան դէմ, քանի սա ընդհանուր ձևով արտաբայտուած կը մնայ, և եթէ այդտեղ մէկը մատերիալիստ տեսնի էլ՝ այդ կարող է անել միայն յոյզի այս կամ այն մասնակի տեսակը

ինկատի ունենայիս: Յոյգերը զգացական պրոցեսներ ին, որ պայմանաւորուած են արտաքին զրգովիչների ազդեցութեամբ առաջացող ներքին ներազական հոսանքներից: ձիշտ է՝ պղատոնամիտ հոգեբանները այդ պրոցեսները ինչ որ խիստ ստոր բանի հետ կապակցուած երևոյթներ են միշտ համարել, սակայն մեր յոյգերի ծագման բնական օսական պայմանները ինչ էլ որ լինին՝ յոյգերը ըստ ինքեան, որպէս հոգեկան երևոյթներ, միևնոյն է՝ պէտք է մնան ինչ որ են: Եթէ յոյգերը խոր, մաքուր և գնահատելի նշանակութիւն ունեցող հոգեկան փաստեր են հանդիսանում, ապա՝ իրանց ծագումը բացատրող ամեն բնախօսական տեսութեան տեսակէտից էլ՝ դարձեալ նոյնքան խոր, մաքուր և իրենց նշանակութեամբ գնահատելի կը մնան, ինչպէս որ են նաև մեր տեսութեան տեսակէտից: Յոյգերն իրենց մէջ են պարունակում իրենց նշանակութեան ներքին չափը. և յոյգերի տեսութեամբ, որ առաջարկուում է, ապացուցանել՝ թէ զգացական գործողութիւնները (պրոցեսները) չը պէտք է անպատճառ ստոր, նիւթական բնաւորութեամբ հանդէս գան և որչափին՝ նոյնքան անհեթեթ բան կը լինէր, ինչպէս որ եթէ առաջարկուող տեսութիւնը մերժէինք յենուելով այն բանի վերայ, թէ այդ տեսութիւնը յոյգերի երևոյթները ստոր մատերիալիստիկ կերպով է բացատրում:

6. Առաջարկածս հայեցակէսը բացատրում է յոյգերի զարմանալի բազմազան լինելը:—Եթէ առաջարկածս տեսութիւնը ճշմարիտ է, ապա ամեն յոյգ՝ այնպիսի հոգեկան տարրերի մի խմբի մէջ գումարման հետեանք է, որոնցից իւրաքանչիւրը որոշ բնախօսական գործողութեամբ է պայմանաւորուած: Մարմնի մէջ կատարուող իւրաքանչիւր փոփոխութեան բաղադրիչ տարրերը արտաքին զրգովիչից առաջացած ռեֆլէկսի հետեանք են: Այստեղից անմիջապէս միշտք կատարելապէս որոշ հարցեր են ծագում՝ խիստ տարբեր այն բոլոր հարցերից որ յոյգերի ուրիշ տեսութիւնների ներկայացուցիչների կողմից են առաջարկուում: Սրանց տեսակէտով յոյգերը վերլուծելիս միակ հնարաւոր խնդիրը կամ դասաւորումն է՝ թէ «յառաջիկայ յոյգը ինչ սեւի կամ տեսակի է պատկանում», կամ նկարագրումն է՝ թէ «յառաջիկայ յոյգը ինչ արտաքին արտայայտութիւններով է բնորոշուում»: Իսկ այժմ խնդիրը յոյգերի պատճառն էրը պարզելն է՝ թէ «այս կամ այն օրեկտը մեր մէջ ինչ ձևափոխութիւններ է յառաջացնում», և թէ «ինչու այս և ոչ թէ ուրիշ ձևափոխութիւն է յառաջացնում»: Յոյգերը մակերևոյթաբար վերլուծելուց՝ այսպիսով աւելի խորամուխ հետազոտման, աւելի բարձր կարգի հետազոտութեան ենք անցնում: Իստաւորումը և նկարագրումը գիտութեան զարգացման ստորնագոյն աստիճաններն են: Հետազոտ-

ման որոշ գիտական ասպարէզի վերայ հէնց որ պատճառական կապակցման հարցն է յառաջ գալիս՝ դասաւորումը և նկարագրումը երկրորդական տեղ են բռնում, և իրենց ունեցած նշանակութիւնը այն չափով են պահում ինչ չափով որ պատճառական կապակցութիւնը հետազոտելու գործն են դիւրացնում: Հէնց որ պարզեցինք, որ յոյգերի պատճառը այն անթիւ ռեֆլէկտոր գործողութիւններն են որ արտաքին օրեկտների ազդեցութեամբ առաջ են գալիս և անմիջապէս մեզանից գիտակցում, ապա մեզ համար իսկոյն և եթ հասկանալի է դառնում թէ ինչու յոյգերի անհամար բաղմութիւն կարող է գոյութիւն ունենալ և թէ ինչու առանձին անհատներ ի մէջ յոյգերը կարող են անորոշ կերպով ձևափոխուել թէ կազմի և թէ յարուցանող շարժառիթներ կողմից: Բանն այն է որ ռեֆլէկտոր գործողութեան մէջ ընդ միշտ անփոփոխ, բացարձակ (արտոյիւտ) ոչինչ չը կայ: Ռեֆլէկտները կարող են խիստ գանազան կերպով գործել, և այդ գործողութիւնները սովորաբար անսահման ձևափոխուում են:

Այս ասած՝ յոյգերի ամեն դասաւորութիւն էլ կարող է «ճշմարիտ» կամ «բնական» համարուել, եթէ իւր կոչմանը բաւարարութիւն է ապրիս, և այնպիսի հարցեր, ինչպէս օր. «թէ բարկութեան կամ երկիւղի իսկական կամ թոխիկ» արտայայտութիւնը սրն է», առարկայական (օրեկտիւ) ոչ մի նշանակութիւն չունին: Այդպիսի հարցեր լուծելու փոխարէն պիտի ջանանք պարզել, թէ ինչպէս է հնարաւոր եղել անի կամ գայրոյթի այս կամ այն «արտայայտութեան» («էկսպրեսիայի») յառաջանալը. և այս—մի կողմից բնախօսական մեքենաբանութեան խնդիր է, իսկ միւս կողմից մարդու հոգեկանի (սիսիսիկայի) զարգացման պատմութեան խնդիր, մի խնդիր՝ որ գիտական բոլոր իրական (ուէալ) խնդիրների նման իւր էութեամբ լուծանելի է, թէև գուցէ և գծուարին է դրա լուծումը գտնել: Մի փոքր ստորիս առաջ կրեւրեմ այդ խնդիրը լուծելու համար կատարուած փորձերը:

7. Լրացուցիչ ապացոյցներ իմ տեսութեան օգտին:—Եթէ իմ տեսութիւնն արդարացի է՝ պէտք է հաստատուի հետեւեալ կողմնակի ապացուցման միջոցով: Տեսութեանս համաձայն՝ հոգու անդորը վիճակի ժամանակ մեր մէջ այս կամ այն յոյգի արտաքին արտայայտութիւնը կամովին յարուցանելիս՝ պէտք է նաև նոյն այդ յոյգը զգանք: Որքան որ փորձով կարելի եղաւ ստուգել՝ այս ենթադրութիւնս աւելի հաստատուում է քան հերքում: Ամեն մարդ էլ գիտէ թէ փախուստը ինչ աստիճան սաստկացնում է մեր մէջ անարեկութեան զգացումը, և թէ ինչպէս կարելի է սաստկա-

ճնել զայրոյթի կամ տխրութեան զգացմունքը ազատութիւն տալով սրանց արտաքին արտայայտութիւններին: Հեկեկանքը նորոգելով սաստկացնում ենք մեր մէջ վշտի զգացմունքը, և լացի իւրաքանչիւր նոր բռնկումից մեր վիշտն աւելի ևս սաստկանում է, մինչև որ վերջապէս յոգնածութիւնից և ֆիզիքական զրգուման բաւ երևոյթին նուազելուց հանգարտութիւն է գալիս: Ամեն մարդ էլ գիտէ թէ ինչպէս զայրոյթի ժամանակ բորբոքման զազաթնակէտին ենք մեզ հասցնում՝ զայրոյթի արտաքին արտայայտութիւնները մի քանի անգամ մէկը միւսի յետից կրկնելով: Ճնչեցէք ձեր մէջ կրքի արտաքին արտայայտութիւնը, և կիրքը կը մարի: Զայրոյթի բռնկմանը տարուելուց առաջ փորձեցէք մինչև տաք համարի՛լ և զայրոյթի շարժառիթը ծիծաղելու չափ ձեզ չնչին կերևայ: Մեզ քաջութիւն ներշնչելու համար չվիպցնում ենք, որով իրօք մեզ վստահութիւն ենք ներշնչում: Միւս կողմից փորձ արէք մի ամբողջ օր նստել մտազրաղ, ամեն բոլոր հաւաչել և շրջապատողներէ հարց ու փորձին ընկճուած ձայնով սլատասխանել, և դրանով ձեր մեղամաղձոտ տրամադրութիւնը աւելի ևս կը սաստկացնէք: Բոլոր փորձառու մարդիկ հետեւալ կանոնը բարոյական դաստիարակութեան համար խիստ կարեւոր են համարում. եթէ ուզում ենք մի ոչ-ցանկալի յուզական հակում ճնչել մեր մէջ, պէտք է համբերութեամբ և սկզբում սառնասիրտ կերպով այնպիսի արտաքին շարժումներ վերարտադրենք մեր մէջ, որոնք մեզ համար ցանկալի հակառակ տեսակի հոգեկան տրամադրութեան են համապատասխանում: Սոյն ուղղութեամբ կատարուած մեր յամառ ջանքերի հետեւնքն այն կը լինի, որ հոգու շարամիտ և ճնչուած վիճակը կանհետանայ և մի դուարթ ու հեղ տրամադրութեամբ կը փոխարինուի: Բաց արէք ձեր ձակատի կնճիռները, զուարթ դարձրէք ձեր հայեացքը, ուղղեցէք ձեր կազմուածքը, խօսեցէք մաժուռ տօնով սերախ-ուրախ ողջունելով ծանօթներին, և եթէ ձեր սիրտը քար չէ՝ ակամայից քիչ-քիչ բարեմիտ արամադրութեան կենթարկուիք:

Ասած իս դէմ կարելի է այն փաստն առաջ բերել, որ գերասաններից շատերի վկայութեամբ՝ իրենք ամենակատարեալ կերպով և ձայնով, երեսի միմիկայով և մարմնի շարժումներով յոյզերի արտաքին արտայայտութիւնները վերարտադրում են, բայց այդ կատարելիս ոչ մի յոյզ չեն զգում: Սակայն դոկտ. Արչերի (Archer) վկայութեամբ, որ այս հարցի համար գերասանների կեանքից հետաքրքրական վիճակագրական տեղեկութիւններ ունի հաւաքած, ուրիշ գերասաններ էլ պնդում են, որ երբ գերը լաւ խաղալ է յաջողուել իրենց՝ նոյն գերին համապատասխան բոլոր յոյզերն էլ զգալիս են եղել: Գերասանների այս տարաձայնութիւնը շատ պարզ կարելի է

բացատրել: Իւրաքանչիւր յոյզի արտայայտութեան մէջ ներքին օրգանիկ գրգռութիւնը ոմանք կարող են լինում կատարելապէս ճնչել, որով զգալի կերպով ճնչուած կը լինի նաև ինքը յոյզը. իսկ այլ կարգի մարդիկ այդ կարողութիւնից զուրկ են: Այն գերասանները որոնք խաղի ժամանակ յոյզ ունենում են, անկարող են—, իսկ որոնք որ չեն զգում, կարող են—յոյզերը և սրանց արտայայտութիւնները կատարելապէս անջատել միմեանցից:

8. Մի հնարաւոր առարկութեան դեմ պատասխան:—Տեսութեանս նկատմամբ ինձ կարող են առարկել, որ յոյզի արտայայտութիւնը զսպելով՝ երբեմն յոյզը սաստկացնում ենք: Մանր է լինում հոգու վիճակը, երբ հանգամանքները հարկադրում են զսպել մեր ծիծաղը, երկիւղից ճնչուած զայրոյթը ամենախիստ տեսութեան է փոխուում: Ընդհակառակն, յոյզի ազատ արտայայտումը թեթևութիւն է տալիս:

Այս առարկութիւնը աւելի առերևոյթ մի բան է, քան իրական հիմք ունեցող: Արտայայտման ժամանակ յոյզը միշտ զիտակցում է: Արտայայտումից յետոյ, երբ նեարգական կետրոններում էներգիայի կանոնաւոր պարպումն արդէն կատարուած է լինում, այլ ևս յոյզ չենք զգում: Բայց երբ յոյզի արտայայտութիւնը զսպած ենք լինում երեսի միմիկայի մէջ՝ կարող է պատահել որ կուրծքի կամ ստամոքսի ներքին զրգիւրը աւելի ևս ուժգնութեամբ արտայայտուի, ինչպէս օր. ծիծաղը զսպելու դէպքում. կամ թէ յոյզը՝ առաջացնող օրեկտի և զսպող ազդեցութեան զուգորման (կոմբինացիոնի) պատճառով կարող է մի բոլորովին ուրիշ յոյզի փոխարկուել, որին թերևս մի այլ տեսակի և աւելի զօրեղ օրգանիկ գրգռութիւն է ընթացակցում: Եթէ թշնամուս սպանել կամենայի, բայց չհամարձակուէի այդ ի կատար ածել, այս դէպքում իմ յոյզը բոլորովին այլ տեսակի կը լինէր համեմատած այն յոյզի հետ, որ կը լինէր իմ մէջ եթէ ցանկութիւնս իրագործ էի: Ընդհանրապէս այս առարկութիւնն անհիմն է:

9. Աւելի նուրբ յոյզեր:—Էսթետիկ յոյզերում մարմնական զրգիւրը և զգալու սաստկութիւնը, թափը, կարող են թոյլ լինել: Էսթետիկ մարդը արուեստի մի երկ կարող է հանգիստ, առանց որևէ մարմնական զրգուման, դուռ մտաւոր (ինտելեկտուալ) կերպով գնահատել: Միւս կողմից արուեստի ստեղծագործութիւնները խիստ ուժգին յոյզեր կարող են յառաջացնել, և այսպիսի դէպքերում փորձը կատարելապէս համաձայն է մեր սուղարկած տեսական զրոգութիւններին: Մեր տեսութեան համաձայն յոյզերի հիմնական աղբիւրները չկատրոն ա ձի գ հոսանքն երն են: Էսթետիկ (օր. երաժշտական)

ըմբռնման ժամանակ զլիսաւոր դերը կետրոնաձիգ հոսանքներինն է, անկախ այն հանգամանքից թէ արդեօք սրանց կից նաև ներքին օրգանիկ գրգիռներ ծագում են թէ ոչ: Ինքը էսթետիկ երկը զգայութեան օրեկտըն է, և ինչ աստիճան որ էստետիկ ըմբռնութիւնը անմիջական «բիրա», վաւ զգայութեան օրեկտ է լինում, նոյն աստիճան «բիրա» և պայծառ է լինում նաև նրան կապակից էսթետիկ հաճոյքը: Չեմ ժխտում, որ կարող են նաևրը հաճոյքներ լինել, ուրիշ խօսքով՝ կարող են այնպիսի յոյզեր լինել, որոնք բացառապէս կետրոններէ գրգռումից են պայմանաւորուած կատարելապէս անկախ կետրոնաձիգ հոսանքներից: Զգացմունքների այդ տեսակին կարելի է վերագրել բարոյական գոհացման, երախտապարտութեան, հարցասիրութեան, որ և է խնդիր լուծելուց յետոյ զգացած թեթևութեան զգացմունքները: Սակայն այս զգացմունքների նուազութիւնն ու զժգունութիւնը, երբ սրանք մարմնական գրգռութիւնների հետ կապակցուած չեն լինում, մի սուր կոնտրաստ, հակադասակեր է ներկայանում աւելի բերա յոյզերի համեմատութեամբ: Զգայուն և տպաւորուն մարդկանց մէջ նուրբ յոյզերը միշտ մարմնական գրգիռներին կապակցուած են լինում. օր. բարոյական արգարութիւնը արտայայտուած է ձայնի հնչման կամ աչքերի նայուածքի մէջ և այլն: Ինչ որ հիացում ենք կոչում, միշտ մարմնական գրգռութեան հետ կապակցուած է լինում, թէկուզ առաջացնող շարժաբիթները զուտ մտաւոր (ինտելեկտուալ) հանդամանքներ լինեն: Եթէ մի ճարտիկ սպացուցում կամ մի փայլուն սրախօսութիւն մեր մէջ իսկական ծիծաղ չէ յարուցանում, եթէ մի արդար և վնասան վարմունք տեսնելիս մարմնական գրգիռ չենք զգում՝ ապա մեր հոգեկան վիճակը հազիւ թէ կարելի լինի յոյզ կոչել Իրօք (de facto)՝ այստեղ երևոյթների լոկ մտաւոր (ինտելեկտուալ) մի ըմբռնութիւն է տեղի ունենում, որոնք ճարտիկ, սրախօս կամ արգար, վնասան և այլն երևոյթների խմբին ենք վերագրում: Գիտակցութեան՝ լոկ գոտոգութիւն պարունակող նման վիճակները հոգեկան՝ աւելի շուտով իմացական պրոցեսներին պէտք է վերագրել և ոչ թէ յուզական:

10. Երկիւղի նկարագրութիւն:—2-րդ պրակում յայտնուած խորհրդածութիւններէս հիման վերայ՝ յոյզերի ոչ մի ցուցակ (ինվենտար), ոչ մի դասաւորութիւն, ոչ էլ յոյզերի արտայայտութիւններէ նկարագրութիւն այստեղ յառաջ բերելու չեմ: Գրեթէ այդ բոլորն էլ ընթերցողս կարող է ինքն իմանալ՝ իրեն և շրջապատողներին դիտելով: Սակայն սրպէս յոյզերի արտայայտման նկարագրութեան մի լաւագոյն օրինակ՝ այստեղ կը բերեմ երկիւղի արտայայտութեան Գարվինի կատարած նկարագրութիւնը:

«Երկիւղին յաճախ ապշութիւն է նախորդում և այնքան սերտ կերպով նրա հետ կապակցուած է լինում, որ երկուսն էլ իսկոյն և եթ ազգում են տեսողութեան և լսողութեան վերայ, Երկու գէպքումն ևս աչքերն եւ բերանը լայն բացուած են և յօնքերը բարձրանում: Ատխեցած մարդը առաջին ըստէին կանգնած մնում է քարացածի նման, շունչը պահելով և անշարժ մնալով, կամ թէ գետնին է թեքում, կարծես բնագաբար աշխատելով աննկատելի մնալ: Սիրտը արագ-արագ է բարախում և ուժեղ խփուկողքին, թէև շատ տարակուսելի է, որ այս գէպքում սիրտը սովորականից աւելի մեծ ուժով բանելիս լինի, սովորականից աւելի յոյզ կերպով արիւն մղելով մարմնի բոլոր մասերին. որովհետև այդ գէպքում կաշին ըստէապէս գոյնը գցում է, ինչպէս ուշաթափութեան սկզբում: Որ սաստիկ երկիւղի զգացմունքը կաշու վերայ մեծ ազդեցութիւն ունի՝ այդ կարող ենք համոզուել ուշադրութիւն դարձնելով՝ մի ըստէի մէջ իրագործուող քրտնքի զարմանալի արտաթորման վերայ: Քրտնքի այդ արտաթորումը աւելի ևս նրանով է աչքի ընկնում, որ կաշուի երեսը այդ միջոցին սառն է լինում (որտեղից և առաջացել է «պաղ քրտինք» խօսքը). մինչդեռ՝ երբ քրտինքը կանոնաւոր և սովորական (նորմալ) կերպով է արտաթորում քրտնքի գեղձերից՝ կաշուի երեսը տաք է լինում: Մազերը կաշուի վերայ այս գէպքում բիզբիզ են կանգնում, և արտաքին մկանները գոդալ են սկսում: Սրտի զործունէութեան կանոնաւոր եղանակը խանգարուելով՝ շնչառութիւնն էլ արագանում է: Լորձուքի գեղձերը դադարում են կանոնաւոր գործելուց, բերանը չորանում է և ստէպ-ստէպ բաց ու խուփ լինում: Նս նկատել եմ որ թեթև անի ժամանակ յորանջելու մեծ ցանկութիւն է ծագում: Անի արտայայտութեան ամենաբնորոշ նշաններից մէկն է մարմնի բոլոր մկանների գոդը, որ շատ անգամ ամենից առաջ շրթունքների վերայ է նկատուում: Այս պատճառով, ինչպէս և բերանը չորանալու պատճառով՝ մարդու ձայնը խուլոտ, խուլ է դառնում, իսկ երբեմն նաև իսպառ կտրուում: Սրբ անը սաստկանալով սարսափահարման խիստ վիճակին է հասնում՝ յուզական ռէակցիաների մի նոր պատկեր ենք ստանում: Սիրտը բոլորովին անկանոն է բարախում, կանգ է առնում և ուշադնացութիւն է յառաջ դալիս. երեսը մեռելի գոյն է ստանում. շնչառութիւնը ծանրանում է. ուրնգները լայն բացուած են. շրթունքները ջղաձգաբար շարժուած են ինչպէս շնչասպառման ժամանակ. ներս ընկած այսերը դողում են. կոկորդում կուլ տալու և շունչ ներս քաշելու գործողութիւններ են կատարում. չուած և բոլորովին բաց աչքերը անի առաքկայի վերայ են սեւեւուած լինում կամ անգաղար այս ու այն կողմը



չըջըջում: Ասում են՝ որ բիրերը այդ ժամանակ չափազանց լայնացած են լինում: Բոլոր մկանները փետանում են կամ սկսում են ջրածգարար շարժուել, բուռնցքները մերթ սեղմում են մերթ բացւում, այս շարժումները շատ անգամ ջրածգարար են կատարում: Ձեռները կամ տարածուած են լինում դէպի յառաջ, կամ անկարգ կերպով գլուխն իրենց մէջ են առնում: Ուրիշ գէպքերում փախչելու մի յանկարծական անգստելի հակում է յառաջանում, և այս հակումը այն աստիճան զօրեղ է լինում, որ ամենաբաջ գինուորներն անդամ կարող են տարուել այդ յանկարծական սնի տաղնապով: 1)

11. Յուզական ռեակցիաների ծագումը:—Յոյզ առաջացնող գանաղան օրեկտները ինչպէս են մեր մէջ մարմնական գըըգըման այսինչ որոշ տեսակները առաջ բերում: Այս հարցը քիչ ժամանակ է ինչ յարուցուել է. սակայն արդէն եղած են պատասխան տալու հետաքրքրական փորձեր:

Արտայայտութիւնների մի քանի տեսակները կարելի է այն շարժումների թոյլ կրկնութիւնը համարել, որոնք առաջ (երբ աւելի սուր կերպով են կատարուելիս եղել) անհատի համար օգտակար են եղել: Արտայայտութեան միւս տեսակները նմանապէս կարելի է այն շարժումների թոյլ վերարտագրութիւնը համարել, որոնք ուրիշ պայմաններում օգտակար շարժումների անհրաժեշտ բնախօսական լրացումն են հանդիսացել: Այս տեսակի յուզական ռեակցիաների օրինակ կարող է ծառայել երկիւղի կամ բարկութեան ժամանակ ընդհատումներով տեղի ունեցող շնչառութիւնը, որը, այսպէս ասած, մի օրգանիկ արձագանք, մի կիսատ վերարտագրութիւն է այն վիճակի, երբ մարդս իրօք ստիպուած է եղել ծանր շունչ քաշել թշնամու հետ կուռելիս կամ արագ-արագ փախչելիս: Այս են դոնէ Սպենսերի՝ սոյն խնդրի նկատմամբ արած վարկածները, որ նաև այլ գիտնականների կողմից հաստատութիւն են դաել: Որքան ինձ յայտնի է՝ Սպենսերն էր նաև առաջին գիտնականը որ ենթադրութիւն էր յայտնել, թէ սնի և բարկութեան ժամանակ տեղի ունեցող միւս շարժումները կարելի է սկզբնապէս օգտակար եղած շարժումների նախնական (աուդիմենտար) մնացորդներ համարել:

Սպենսերն ասում է, որ «վերք սաանալուն կամ փախուստին ըն-

1) Origin of the Emotions (N. J. ed.) p. 292. Ռուսերէն թարգմանութիւնը՝ «О Выраженіи ощущеній у животныхъ и телѣвѣка», Чоպարիսկու խմբագրութեամբ:

թացակից հոգեկան վիճակները թոյլ կերպով զգալ՝ նշանակում է անկոչուած բանը զգալ: Որքը բռնելուն, սպանելուն և ուտելուն կից տեղի ունեցող հոգեկան վիճակները թոյլ կերպով զգալ՝ միեւնոյն է թէ որքը բռնել, սպանել և ուտել ցանկալ: Մեր հակումների բնական լեզուն մի ապացոյց է՝ որ որոշ գործողութեան հակուած լինելը ոչ այլ ինչ է բայց եթէ նոյն այդ գործողութեան հետ կապակցուած հոգեկան գրգռութիւնների սկզբնաւորութիւնը: Խիստ անը՝ ճիշտ, փախչելու ձգտումով, սուտի թրթռոցով և գոյով է արտայայտում,—մէկ խօսքով նոյն այն արտայայտութիւններով, որոնք մեզ երկիւղ ներշնչող օրեկտի պատճառով իրօք ունեցած տանջանքներին են ընթացակցում: Մի բանի ջարդելուն և ոչնչացնելուն ընթացակից կրքերի արտայայտութիւնն են՝ մկանների սիսթեմի ընդհանուր լարումը, ատմաների կրճատը, ճանկերի դուրս հանելը, աչքերի լայնանալը և փռնչալը. այս բոլորը այն գործողութիւնների թոյլ արտայայտութիւններն են, որ որսի սպանմանն են ընթացակցում: Այս օրեկտիւ տուածներին ամեն մարդ սեպհական փորձից կարող է բազմաթիւ փաստեր աւելացնել, որոնց նշանակութիւնը նոյնչափ հասկանալի է: Ամեն մարդ կարող է իւր անձի վերայ փորձելով համոզուել, որ ան կոչուած հոգեկան վիճակը գալիք որոշ անասորձ երեոյթների պատկերացումն է, և որ բարկութիւն կոչուած հոգեկան վիճակը այն գործողութիւնների պատկերացումն է, որոնք մէկին տանջանք պատճառելու հետ են կապուած»:

Մեր մէջ թոյլ կերպով կրկնում են այն ռեակցիաները, որոնք մեզ համար օգտակար կը լինէին որոշ յոյզի օրեկտի հետ աւելի խիստ կերպով ընդհարում ունենալիս. այս սկզբունքը փորձում բազմաթիւ գործողութիւններ է ստացել: Ատամները ցոյց տալու, բերանը մի կողմ ձուլելով վերի ատամները բանալու նման մօնը նշանը՝ Կարվինը մի աւանդ է համարում մեր նախնիքներից ժառանգած, որոնք խոշոր ժանիքներ են ունեցել, որ և թշնամու վերայ յարձակուելիս բանալիս են եղել (ինչպէս որ ներկայումս շներն են անում): Նմանապէս բոստ Կարվինի՝ որ և է արտաքին բանի վերայ ուշադրութիւն դարձնելիս յօնքերը վեր քաշելը, և գարմանքի ժամանակ բերան բանալը նրանից է, որ այս շարժումները ծայրայեղ գկպքերում օգտակար են լինում: Յօնքերը վեր քաշելը կապուած է աչքերը բանալու հետ լաւ տեսնելու համար. բերան բանալը կապուած է լսողութիւնը խիստ լարելու և արագ շունչ ներս քաշելու հետ, որ սովորաբար մկանների լարուելուն է նախորդում: Ըստ Սպենսերի՝ գայրոյթի ժամանակ անգների լայնանալը այն գործողութիւնների մի մնացորդ է՝ որ կատարելիս են եղել մեր նախնիքը կուռի ժամանակ քթով շունչ ներս քաշելիս, ճերը իրանց բերանը

լիքն էր լինում հակառակորդի մարմնի մասով, որ ատամներով էին բռնած լինում»։ (1) Մանտեղացի կարծիքով՝ ահի ժամանակ տեղի ունեցող դողը արիւնը տարացնելու համար է (1)։ Վունդը կարծում է, թէ երեսի և սարանցի շառագունելը մի երևոյթ է, որի նպատակն է չափաւորել արեան ճնշումը ուղեղի վերայ, որովհետեւ սրտի յանկարծակի գրգռմամբ արիւնը գէպի գլուխն է խուժում։ Վունդը և Գարվինը սնդոււմ են, որ արտասուքի սրտահոսելը նոյն նշանակութիւնն ունի՝ արիւնը գէպի երեսը քաշել և ուղեղից յետ հոսեցնելով։ Աչքի շուրջը եղած մկանների կծկուելը մանկութեան ժամանակ աչքերը չափազանց արիւնակալուելուց է պահանջում երբ երեխան խիտ բղաւում է. նոյն մկանների կծկուելը նաև չափահաս հասակումն է կատարում յօնքերը կիտելու ձևով, որ միշտ խիւղն և եթ անդի է ունենում, երբ գործելիս կամ մտածելիս մի անախորժ կամ դժուարին բանի ենք հանդիպում։ Գարվինն ասում է. «Որովհետեւ յօնքերը կիտելու սովորութիւնը անհամար սերունդների շարքում երեխաների նկատմամբ ամեն անգամ կատարուել է աղաղակելուց կամ լացից առաջ՝ այդ պատճառով էլ նոյն գործողութիւնը սերտ գուգորդուել է մի ինչ ուր . աղէտաբեր կամ անախորժ բանի ակնկալման զգացման հետ։ Այնուհետև նոյն գործողութիւնը նմանօրինակ պայմաններում յառաջացել է նաև չափահասութեան ժամանակ, թէև երբէք լացի չի հասել։ Աղաղակելուց և լալուց կամովին մեզ գոպել ենք սխտւմ մեր կեանքի դեռ վաղ հասակում, իսկ յօնքերը կիտելու հակումից հողիւ թէ երբ և իցէ կարելի լինի յետ սովորել»։ Նրկըրորդ սկզբունքը կարելի է անուանել՝ դ գ ա ց ա կ ա ն ն մ ա ն օ ր ի ն ա կ դ ր գ ի չ ն ե ր ի ա ւ ի թ ո վ ն մ ա ն օ ր ի ն ա կ դ ր ժ ե լ ու, ո է ա կ ց ի ա յ ան ե լ ու ս կ զ ր ու ն ք։ Մի ամբողջ չարք անականներ կան, որ փոխաբերական մաքով զգացական գանազան շրջանների պատկանող տալաւորութիւնների ենք վերադրում. ամեն տեսակի և կարգի փորձական տալաւորութիւններն էլ կարող են անոյշ, հարուստ կամ հաստատուն լինել, իսկ կարողների զգայութիւններն էլ կարող են սուր լինել։ Սրա համաձայն Վունդը և Պիգերիսը բարոյական շարժաւթիւնների առիթով տեղի ունեցող ամենաարտայայտիչ ուսակցիաների մեծ մասը ճաշակելիքի տալաւորութիւնների սխմբոլարար գործածուող արտայայտութիւն են համարում։ Այն գործողութիւնները, որով մեր վերաբերմունքն ենք արտայայտում գէպի քաղցրի, դառնի, թթաւի զգայութիւններին նմանութիւն ունեցող փորձական տալաւորութիւնները՝ նոյն գործողութիւններն են, որով մեր վերաբերմունքը գէպի ճաշակելիքի համապատասխան տալաւորութիւններն ենք արտայայտում։ «Քոյր հոգեկան վիճակները՝ որ լեզուն փոխաբերաբար որպէս քաղցր, ստիպ, դառն է նշանակում՝ ճաշակելիքի համապատասխան տալաւորութիւնների արտայայտմանը նմանօրինակ բե-

րանի միմիկական շարժումներով են բնորոշում։ Միմիկայի նոյն նմանօրինակութիւնը կարելի է նկատել նաև զգուանքի և ախորժանքի արտայայտութեան մէջ։ Զգուանքի արտայայտութիւնը՝ փոխել սկսելու շարժումն է. ախորժանքի արտայայտութիւնը՝ քաղցր բան ծծող կամ շրթունքներով մի բանի համը տեսնող մարդու ժպիտին է նման։ Մեղանում մերժելու սովորական շարժումը—գլուխը իւր առանցքի շուրջը պտտեցնելը—այն շարժումի մի մնացորդն է, որ սովորաբար երեխաներն են անում մի անախորժ բան բերանը մտնելուն ընդդիմադրելիս։ Նոյն այդ շարժումը մեր մէջ այն ժամանակ է տեղի ունենում՝ երբ որ և է ձախորդութեան լոկ մտադատկերը, իրէան է շարժաւթ (ստիմուլ) հանդիսանում։ Նմանապէս գլխի գրական շարժումը կերակուր ընդունելու համար գլուխը ցած թիքելուն նմանօրինակութիւն ունի։ Անհանց նկատմամբ՝ սկզբնապէս հոտոտելիքի հետ կատարեալ սրտութեամբ կապակցուած շարժումների և բարոյական ու հոտարակական արհամարհանքի ու հակակրտնքի արտայայտութեան միջև եղած նմանօրինակութիւնը այնչափ ակնյայտնի մի բան է, որ պարզաբանման կարօտ չէ։ Զարմանքի և վախի ժամանակ թարթում ենք մեր աչքերը, թէկուզ ոչ մի վտանգ էլ մեր աչքերին սպառնալիս չլինէր։ Հայեցուածքը առ վայրկիան մի կողմ շրջելը կատարելապէս հաստատ մի նշան է, որ ձեր առաջարկը նոյն անձի դուրը չեկու և ձեզ մերժում է սպասում»։ Այս օրինակները բաւական են ցոյց տալու համար, որ այդպիսի շարժումները նմանօրինակութեամբ արտայայտիչ են։

Ընթերցողս անշուշտ արդէն համոզուելու առիթ ունեցել է, որ մեր մասնացոյց արած երկու սկզբունքների օգնութեամբ խիտ բազմաթիւ գէպերի համար լոկ ենթադրական և արհեստական բացաղրութիւն կարելի է լինում ապր Բայց եթէ մեր յուզական ուսակցիաներից մի քանիսը յիշուած երկու սկզբունքների միջոցով կարելի էլ է լինում բացատրել, դարձեալ դեռ բազմաթիւ յուզական ուսակցիաներ են մնում որ բնաւ չենք կարող բացաղրել, և ներկայումս՝ արտաքին գրգիւնների առիթով տեղի ունեցող ինքնուրոյն (իդիոպաթիկ) ուսակցիաներ պիտի համարենք։ Այդպէս են օրինակ՝ ընդերքում և ներքին գեղձերում կատարուող առանձին տեսակի երեղթիները, բերանի ցամաքելը, խիտ ահի ժամանակ փրսխելը և փորլուծութիւնը, արիւնը գրգռուած ժամանակ առատ միզահոտութիւնը, վախի ժամանակ միզապարկի կծկուելը, մի բանի սպասելիս յօրանջելը, խիտ արտմութեան ժամանակ կոկորդի մէջ մի բան մնացած լինելու զգայութիւնը, դժուար գրութեան ժամանակ կոկորդի խտուար և սաստկացած կուլ տալը, «սրտի անձկութիւնը» ահի ժամանակ, կաշուի պաղ և տաք, ընդհանուր և տեղական քրտնելը,

կաշուի կարմրելը, այլև մի քանի ուրիշ սիմպտոմներ, որոնք թէ-
պէտ թերևս գոյութիւն ունին, բայց գեւեւ միւսների չարքից որո-
շակի կերպով չեն գտնուած և առանձին անուն դեռ չեն ստացել:
Սպիննէրը և Մանանդացը կարծում են, որ ոչ միայն անի, այլ
նաև բազմաթիւ ուրիշ վրդոմունքների ժամանակ տեղի ունեցող
գոզը մի դուր հիւանդական երևոյթ է: Նոյն կերպ են սարսափի
նաև միւս ուժղին արտայայտութիւնները, որոնք *Վաստակար* են
լինում նոյն էակի համար: Նեարդերի սիսթէմի նման մի բարձր
օրգանիզմում պէտք է որ բազմաթիւ պատահական աէակցիա-
ներ գոյութիւն ունենան, այդ աէակցիաները չէին կարող բոլոր-
վին ինքնակախ կերպով զարգանալ՝ միմիայն օրգանիզմին օգտա-
կար լինելու պատճառով: Մովխտը, խտուտը, ամաչկուտութիւնը,
երաժշտասիրութիւնը, զանազան արբեցնող խմիչքների հալուժը
պէտք է որ պատահական կերպով յառաջացած լինին: Անհետեւ
բան կը լինէր պնդել, իբր թէ յուզական աէակցիաներից և ոչ մէկը
այդպիսի կեղծ—պատահական կերպով առաջ չէր կարող գար

